ԷԴԳԱՐ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱԲՐԻԵԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻՆ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ-ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

19-րդ դարի 30-50-ական թվականներին թե՛ արևելահայության և թե՛ արևմտահայության համար ստեղծված սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ կացությունը արդեն նույն դարի կեսերին ազդակ է հանդիսանում հայ հասարակական-քաղաքական երկու՝ ազգային-պահպանողական և լիբերալ (ազատական) հոսանքների առաջացման համար: Հայ պահպանողականությունը, որն ուներ ավելի հին արմատներ, 19-րդ դարի կեսերին վեր է ածվում հասարակական-քաղաքական հոսանքի:

Հայ պահպանողականության վերաճումը հոսանքի թերևս կարելի է պնդել, որ սկսվել է Ներսես Աշտարակեցու կաթողիկոսության շրջանից (1843-1857 թթ.):

Մեր կարծիքով, արհեստական է հայ հասարակական հոսանքների տարաբաժանումը արևելահայ և արևմտահայ հատվածների: Թե՛ կղերա-աղայական և թե՛ կղերա-ամիրայական հոսանքների ներկայացուցիչները[1] ազգային-պահպանողականներ էին և թերևս կարելի է դրանք բնութագրել միայն որպես ենթահոսանքներ ազգային-պահպանողականության մեջ կամ էլ գաղափարական փոքր-ինչ այլ ընդհանրությամբ միավորված մարդկանց (պահպանողականների) խմբեր: Այսպիսով, ընդհանուր առմամբ գոյություն են ունեցել երկու՝ ազգային-պահպանողական և ազատական (լիբերալ) հասարակական-քաղաքական հոսանքներ:

Գաբրիել եպիսկոպոս Այվազովսկին պատկանում է պահպանողական հոսանքի առավել աչքի ընկած գործիչների թվին և իր աջ հայացքների համար խորհրդային պատմագրության կողմից բնութագրվել է որպես հետադիմական և դասվել արհեստածին կղերա-ամիրայական հոսանքի ներկայացուցիչների թվին: Իսկ որ հոգևորական Այվազովսկին եղել է իր ժամանակի կրթված և ազգի ապագայի խնդիրներով մտահոգված մտավորական, կտեսնենք ստորև:

Այվազովսկուն պատանի հասակից ծնողներն ուղարկել էին Վենետիկ՝ Ս. Ղազար, «ուր զորեղ հիշողությունն ու բնական մյուս ձիրքերը նրան միջոց տվին ստա-

---

[1] Հասարակական-քաղաքական հոսանքների դասակարգումը ըստ խորհրդային պատմագրության տե՛ս **Ա. Գ. Հովհաննիսյան**, XIX դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4, 1965, և թիվ 1, 1966, նաև նույնի՝ Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, 1955 թ., հ. 2, 1956 թ., Երևան: Ինչպես նաև՝ **Հ. Ղազարյան**, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1965, նաև նույնի՝ Արևմտահայ հասարակական հոսանքները, Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ. հ. V, էջ 426-458:

նալու հոգևոր ու աշխարհիկ այն բանիմացությունը, որ հատուկ էր այդ վանքի բազմաճյուղ ուսումնառությանը»[2]: Դառնալով վարդապետ՝ Այվազովսկին մի կարճ ժամանակ վարում է «Բազմավէպ» հանդեսի խմբագրի պաշտոնը: 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանը հաջորդած շրջանում տեղափոխվելով Փարիզ՝ նա ստանձնում է Մուրադյան վարժարանի վարիչի պաշտոնը և «ջանք էր դնում հեռու պահել սաներին այդ պահին Ֆրանսիայում տարածված ազատամտական ու սոցիալիստական մտքերի վարակից և միաժամանակ հայ կյանքում ձայնատար հանդիսանալ բոնապարտիստական Ֆրանսիայի քաղաքականությանը»[3]:

Գ. Այվազովսկին Եկեղեցին համարում էր ազգի գոյության միակ հենարանը, կրոնն ու լեզուն՝ ազգության սյուները. «Հերիք մոռացաւ մեր ազգը իւր ազգութիւնը, այսինքն իւր պատուական լեզուին եւ ուղղափառ սուրբ հաւատքին յարգը ու արժանաւորութիւնը, ան կ՚ուղղորդուէ կործանում»[4], և պայքար էր ծավալում բոլոր տեսակի ազատական և հեղափոխական գաղափարների դեմ[5]:

Սրանով հանդերձ, չի կարելի համաձայնվել Վ. Պարսամյանի այն տեսակետի հետ, որի համաձայն, ինչպես Գ. Այվազովսկին, այնպես էլ նրա բնորոշմամբ, կղերաֆեոդալական հոսանքի մյուս ներկայացուցիչները «ձգտում էին խավարի մեջ պահել ժողովրդին՝ նրա վրա հեշտ ու հանգիստ իշխելու և շահագործելու համար: Նրանք աշխատում էին դպրոցը դարձնել եկեղեցու գավիթ՝ մատաղ սերնդին կրոնական ոգով դաստիարակելու, ժողովրդին հլու-հնազանդ պահելու համար»[6]:

Անշուշտ, ազգային-պահպանողականները, մանավանդ նրանց ծայրահեղ թևը դեմ էին բոլոր տեսակի հեղափոխական շարժումներին, բայց պնդել, որ դա անում էին ժողովրդին իշխելու և շահագործելու համար, ճիշտ չի լինի: Պարզապես նրանք, ինչպես բազմիցս նշել ենք, կրոնը, գրաբարը և դպրոցն էին համարում ազգապահպանման հիմքը: Գ. Այվազովսկին 1850-ական թթ. մասնակցում է Հայկական վարժարանի հիմնադրմանը և միաժամանակ ձեռնամուխ լինում «Մասյաց աղավնի» պարբերաթերթի հրատարակմանը (նախ՝ Փարիզում, ապա՝ Ռուսաստանում՝ Պետերբուրգում): Շատ չանցած՝ նա հիմք է դնում Խալիբյան վարժարանին[7]: «1858 թ. հոկտեմբերի 1-ին Թէոտոսիայում բացուեցաւ Խալիպեան ուսումնարանը Այվազեան վարդապետի ձեռամբ և նրա մօտն էլ տպարան...»,- նշում է Գաբրիել Պատկանյանը[8]:

Այսպիսով նա ձեռք է բերում բոլոր այն միջոցները, որոնցով հնարավորություն կունենար կյանքի կոչելու իր գաղափարները: Պետք է շեշտել նաև, որ Այվազովսկու

---

[2] «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4, 1965 թ., էջ 63:

[3] Նույն տեղում, էջ 64:

[4] «Մասյաց Աղավնի և Ծիածան Հայաստանի», Թեոդոսիա, 1860 թ., թիվ 7, էջ 107:

[5] Մասնավորապես Մ. Նալբանդյանի գաղափարների դեմ նրա պայքարի մասին տե՛ս **Աշոտ Հովհաննիսյան**, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955:

[6] **Պարսամյան Վ. Ա.**, **Հարությունյան Շ. Ռ.**, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1979, էջ 155:

[7] Խալիբյան վարժարանի հիմնադրման և հետագա գործունեության մասին մանրամասն տե՛ս **Գ. Այվազովսկի,** Պատմութիւն Խալիպեան ուսումնարանին Ազգիս Հայոց, Տփխիս 1880 թ.:

[8] Ե. Չարենցի անվ. ԳԱԹ., Գաբրիել Պատկանյանի ֆոնդ, գործ 28 (ձեռագիր հավաքածու), էջ 263:

պարբերականը լույս էր տեսնում աշխարհաբար լեզվով: Սա նշանակում է, որ նա հասարակական-քաղաքական կյանքում ընդհանրապես դեմ չէր փոփոխություններին: Այվազովսկին անգամ դեմ չէր լեզվի մեջ կատարվող որոշ փոփոխություններին: Իր հրատարակած «Մասյաց աղավնի» թերթում նա գրում է. «Մեր ազգին աշխարհաբառ լեզուին հիմը գրաբառն է, եւ հիմակու աշխարհաբառ լեզունուս անկարգութիւնն ու անհամութիւնը մէջի օտար բառերն են, ուստի անոր մաքրութեանը և գեղեցկութեանը օգնել ուզողը միայն պէտք է անոր միջէն օտար ու խորթ բառերն ու ոճերը դուրս ձգէ ու հնար եղածին չափ անոնց տեղը գրաբառ բառեր ու ոճեր մտցնելով՝ գործածած լեզունիս մեր երանաշնորհ Նախնեաց բուն լեզուին մոտեցընէ...»[9]:

Նա դժգոհելով իր հայրենակիցների ընթերցանությունից՝ նշում է. «Արդ, եթէ ռամկօրէն (աշխարհաբար - Է. Հ.) ևս գրելով հազիւ 200 բաժանորդս ունիմ ի Հայոց Տաճկաստանի, զինչ լինիցին, եթէ բոլորովին ի գրոց բարբառ յօրինիցիմ զգրուածսն»[10]: Սա նշանակում է, որ նա ձգտում էր, որ ժողովրդական առավել լայն զանգվածներ հաղորդակից լինեն իր գաղափարներին:

Գաբրիել Այվազովսկին մեծ տեղ է տալիս հայոց լեզվի ազգապահպանման դերին՝ գտնելով, որ լեզուն է ազգը միավորող գլխավոր բաղադրիչը, իր «Աշխարհաբառ լեզուն մաքրելու եւ գեղեցկացընելու վրայ» հոդվածում գրում է. «Թէ որ մեկ բան մը կայ աշխարհիս վրայ, որ մարդուս ինչ ազգէ ըլլալը կ'իմացընէ ամէն տեղ ու ամէն ատեն՝ իր ազգային լեզուն է: Քանի որ ազգ մը իր լեզուն կը պահէ, թեպետ և ուրիշ ամէն ազգային յատկութիւններն ալ կորսունցընէ՝ ազգութիւնը չկորսունցներ, իսկ լեզուն մէկդի ձգելուն պես՝ ազգութիւնն ալ խիստ շուտ կը կորսուի: Ազգ մը իր բուն հայրենիքէն դուրս ըլլալը, հեռաւոր երկիրներ ցրուիլը, օտար տէրութիւններու տակ իյնալը, օտար սովորութիւններու եւ արարողութիւններու հետեւիլը նոր բան չէ, եւ ան ազգը իր ազգութենէն չհաներ, միայն լեզուն բաւական է իմացընելու թէ ինքը աս կամ ան ազգն է, եւ միայն աս ազգութեան նշանն է, որ ոչ դիպուածը եւ ոչ բռնութիւնը կըրնան վերցընել մարդուս վրայէն...: Լեզուն մէկ կերպով մը ազգին ազնուութեանը վկայականն է...»[11]:

Այվազովսկին ունի նաև մի շարք աշխատություններ, որոնք ծառայելու էին որպես ուսումնական ձեռնարկներ՝ նոր սերնդին հայոց լեզվի քերականություն և ուղղագրություն սովորեցնելու համար: Ի դեպ, դրանք ուսուցանում էին թե՛ գրաբար և թե՛ աշխարհաբար, և պատահական չէ, որ Այվազովսկին այդ դասագրքերից մեկի առաջաբանում գրում է. «Աշակերտ մի որ չորս տարի ամբողջ կենայ այնպիսի դպրոցներէն մէկուն մէջ, այս Նախակրթանքին երեք հատորն ևս աւարտէ, պէտք է, որ եղած ժամանակին սովորած լինի ոչ միայն մաքուր աշխարհաբառ լեզուն, այլ և պարզ գրաբառն առանց դժուարութեան հասկանայ և առանց քերականական սխալի շարադրէ...»[12]: Այսինքն վերջինս որպես պահպանողական կարևորում էր գրաբար լեզուն՝

---

[9] «Մասյաց աղավնի», 1855 թ., Փարիզ, Ա տարի, էջ 51:

[10] **Երիցյանց Ա. Պ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 254:

[11] «Մասյաց աղավնի», 1855 թ., Փարիզ, Ա տարի, էջ 49:

[12] **Գ. Այվազովսկի**, Նախակրթանք հայերէն լեզուի, Ս. Էջմիածին, մասն Ա, 1875 թ., էջ 8: Տես նաև

միաժամանակ հասկանալով, որ աշխարհաբար լեզուն այլևս իրողություն է, ուստի անհրաժեշտ է դրա գրագետ իմացությունը:

Գ. Այվազովսկին թեպետ մերժում էր հեղափոխություններն ու հասարակական-քաղաքական ցնցումները, բայց կողմնակից էր անցավագին, զուսպ ու չափավոր փոփոխությունների: Ի տարբերություն ազատականների, նա եթե ոչ ամբողջապես ժխտողական, ապա զգուշավոր վերաբերմունք ուներ հայ կյանքի եվրոպականացման, բարեփոխումների, ազգային լուսավորության ու դպրոցի վերակառուցման հիմնահարցերի նկատմամբ: Այն, որ նա ձգտում էր, որ իր գաղափարները մատչելի դառնան նաև արևմտահայության համար, նշանակում է, որ ելնում էր արևմտահայ և արևելահայ հատվածների ազգային-հոգևոր միասնության գաղափարից: Սա ևս մեկ անգամ վկայում է, որ սխալ է ազգային-պահպանողականության արևելահայ կամ արևմտահայ տարաբաժանումը, որովհետև նրանք շոշափում էին համազգային խնդիրներ:

Գ. Այվազովսկին կողմնակից էր, որպեսզի «տղաքը ոչ միայն կրթութիւն առնուն, այլ և ազգային լինի իրենց առած կրթութիւնը», միաժամանակ դեմ չլինելով «ուրիշ ամէն տեսակ հարկաւոր գիտութիւներէ եւ օգտակար լեզուներու վարժութենէ»[13], սակայն «ազգային հայերէն լեզուն, այսինքն թէ՛ գրաբառը և թէ՛ աշխարհաբառը աղէկ սորվիլը ի հարկէ ամենայն ազգային դպրոցի ուսմանցը հիմը պիտի լինի»[14]:

Գ. Այվազովսկուն անհանգստացնում էր նաև մատաղ սերնդի կրթության մատչելիության հարցը և դրան խոչընդոտող սոցիալական խնդիրները. այդ կապակցությամբ վերջինս գրում է. «Թէպետ բնութեամբ յարմարութիւն շատ ունի ուսում առնելու եւ ամէն տեսակ գիտութիւն սովորելու, բայց կարողութիւնը ձեռք չիտար որ իւր զաւակացը ուսմանն ու կրթութեանը համար մեծամեծ ծախքեր ընէ», ապա շարունակում. «Այս խնդրով բնականապէս այս մի միայն հնարքը կ'իյնայ մտքներինիս, որ ժողովրդոյ մէջ աղքատաց եւ չափաւոր հարստութեան տէր եղողներուն համար այնպիսի դպրոցներ պէտք է ունենալ որոց մէջ աղքատը ձրի ուսում առնի, իսկ միջակը ու հարուստը չափաւոր վճարք մը հատուցանեն»[15]: Նման ձևով Այվազովսկին, փաստորեն, փորձում էր կրթությունը հասանելի դարձնել աղքատների զավակների համար:

Աշ. Հովհաննիսյանը չի ժխտում, որ «Ժամանակակիցներին հմայում էին Այվազովսկու մտավոր շնորհները, նրա գրչի կաշառող պարզությունն ու պատկերավորությունը, նրա քարոզների «քրիստոնեական», «հայրենական» տոնը»[16]: Բայց, դժբախտաբար, սրանք չէ, որ նա համարում է այս կրոնավորի (նա վերջում Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդն էր) գլխավոր հատկանիշները, այլ այն, «որ ազգի պառակտված անդամներին խաղաղության և հաշտության ձիթենի էր պարզում շարունակ» և «օձի նենգությունը սքողելու համար աղավնու անմեղություն

նույնի «Խանգարմունք Հայկաբանութեան ի հնումն եւ ի նորումս», Թեոդոսիա, 1869 թ.:

[13] «Մասյաց աղավնի և Ծիածան Հայաստանի», Թեոդոսիա, 1860 թ., թիվ 3, էջ 42:

[14] Նույն տեղում, էջ 43:

[15] Նույն տեղում, էջ 42:

[16] «Պատմա-բանասիրական հանդես», նշվ. համարը, էջ 64:

էր բանեցնում վարպետորեն»[17]:

Այս դաժան որակավորումը պայմանավորված է նրանով, որ Այվազովսկին անխնա պայքարում էր ազատականների՝ Ստ. Նազարյանի, Մ. Նալբանդյանի և այլոց գաղափարների դեմ: Բայց, ի վերջո, դժվար է պնդել, թե ազատականների և նրանց ծայրահեղ՝ հեղափոխական թևի ներկայացուցչի՝ Մ. Նալբանդյանի մատնանշած գաղափարական ուղին էր արդյոք առավել խոստումնալից հայության ազգային անվտանգության պահպանման տեսանկյունից, որը միանշանակորեն մերժվում էր ազգային-պահպանողականների և հատկապես նրանց առավել արմատական թևի կողմից: Ի վերջո, հեղափոխության ճանապարհով սոցիալական հավասարության հասնելու գաղափարը միշտ մնաց ուտոպիական, իսկ ազատականների՝ եվրոինտեգրման անհրաժեշտության համոզմունքը դրական ոչնչի չհանգեցրեց մեր պատմական հայրենիքի և հայ տարրի պահպանման առումով:

Ի հակադրություն հեղափոխականությանը՝ Այվազովսկին ազգային միասնության ջատագով էր. «Մեր ազգին ներկայ եւ ապագայ երջանկութեանը համար փափաքելի բաներ շատ կան, բայց ամենուն ալ գլուխ պէտք է սեպել միաբանական հոգին, գիտնալով, որ իր անցեալ եւ այժմու թշուառութեան ալ գլխաւոր պատճառ անմիաբանութիւնն եղած է...»[18]: Նա իր հրատարակած թերթի էջերում փորձում էր բարձրացնել ազգային ինքնագիտակցությունը և «Մասյաց աղավնու» մի բաժնում, որը կոչվում էր «Հայկազեան Թանգարան», մշտապես տպվում էին նյութեր հայրենի պատմությունից, հայ ժողովրդի հերոսական անցյալից[19]:

Այսպիսով, Գաբրիել Այվազովսկին ազգային-պահպանողական հոսանքի կարկառուն ներկայացուցիչներից է, որը, չնայած իր որոշակի հակասություններին ու գաղափարական տարաձայնություններին, նույն հոսանքի ներկայացուցիչների հետ իր գործունեության ողջ ընթացքում գործել է հանուն ազգի ու Եկեղեցու:

---

[17] Նույն տեղում, էջ 65:

[18] «Մասյաց աղավնի», 1855 թ., Փարիզ, Ա տարի, էջ 7: Գ. Այվազովսկին ազգի միասնության հարցին է անդրադառնում նաև «Մեր ազգին անմիաբան ըլլալու կամ ըսուելու բուն պատճառները» հոդվածում, տե՛ս նույն տեղում, էջ 73:

[19] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հ. V, էջ 426: